

ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 639
ՏՕՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 67:— **Պրակները՝** 6, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ա՝ 10, Բ՝ 11 և Դ՝ 10 թերթից են:— **Մեծությունը՝** 44.7×33.2×1.6 սմ.:— **Նյութը՝** դեղնած և թրջված թուղթ:— **Կազմը՝** սև լիտերինով ծածկված հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում կա մի հատ դեղնած և թրջված թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 66ա—67բ:— **Տողերը՝** 38:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Զաքարիա ավագ քահանա Զարդեղյանց, միաբան Ավետյաց-Զգրաշեն Ս. Աստվածածին եկեղեցու Տփխիսի:— **Ժամանակը՝** 1922—9 թթ.:— **Վայրը՝** Տփխիս (Թբիլիսի):— **Ծանոթագրություն՝** մատյանն ստացված է 1983 թ. ապրիլի 13-ին Մայր Աթոռի արխիվից: Ձեռագրի հեղինակը՝ Զաքարիա ավագ քահանան ժամանակին այն կտակել է Թիֆլիսի բնակիչ Հակոբ Տեր-Հարությունյանին, իսկ այս վերջինս էլ 1949 թ. այն նվիրել է տոմարագետ Սահակ ծայրագույն վարդապետ Տեր-Հովհաննիսյանին, հետագայում արքեպիսկոպոս և լուսարարապետ Մայր Աթոռի (1879—1965):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրն ունի երկու բաժին.

Ա. Կա 1921—2512 թթ. (592 տարվա) ժամանակաշրջանի յուրաքանչյուր տարվա Փրկչական թվականը, տարվա գիրը, տոմարական և հայկական թվականները, յոթներեակը, վերադիրը, արևի շրջանը, Ս. Զատկի ամսաթիվը և այլ հաշվումներ: Կա նաև կանական հաշվումների այլ տախտակներ (թթ. 1ա—28ա, 37բ—38ա, 42բ, 53ա—55ա, 59բ—60բ և 62բ—63ա):

Բ. Այստեղ ձեռագրի հեղինակը արտագրել է իր գրած և ստացած կարևոր նամակների պատճենները, կոնդակները և վկայագրերը: Տալիս է Ս. Զատկի օրը ճշտելու հաշիվը, ժամանակի չափումը, հռովմայեցվոց օրացույցը, նոր տոմարի և այլ հարցերի մասին (թթ. 28բ—37բ, 38բ—42ա, 43ա—53ա, 55բ—59ա, 61ա—62ա և 63ա—65բ):

Ստորև տրվում է միայն կարևոր վերնագրերը.

Թ. 1ա.— Մշտնջենաւոր տարե-տօնացոյց ըստ Նոր Տոմարի (ըստ Զաքարեանն է այս):

Զկնի Ծննդեան Յիսուսի Քրիստոսի 1921—2512 թ. (ներփակ):

Թ. 5ա.— Գիր տարտոյն կամ տարեգիրը գտնելու օրինակներ և ձևեր ըստ Նոր տոմարի: Կանոն: 1921 թվականից Դ-րդի կցորդն է ԻԴ և Ե-րդի՝ Ե:

Թ. 9ա.— Մշտնջենաւոր-յաւիտենական տարե-օրացոյցի շարունակուող և շարունակելի տախտակ (ըստ Գրիգորեան Տոմարի)—վերին կարմիր շարքն են վերադիրք, միջին սևքն՝ Եօթներեակի կամ Կիրակագիրք և ստորին կարմիրքն՝ Տարեգիրք:

Թ. 9բ.— Մշտնջենաւոր ձայնագիւտ ըստ նոր (Զաքարեան) տոմարի: Ծան. ամսաթվին նախ աւելացնել 13 թիւ, ապա կցորդն աւելացնել և հանել 8—8:

Թ. 10ա.— Մշտնջենաւոր օրացոյց՝ ըստ Նոր տոմարի. անցեալ, ներկայ և ապագայ թուականների շաբաթուայ օրերը գտնելու յաւելուածներ կամ կցորդներ:

Թ. 10բ.— Մշտնջենաւոր օրացոյց ըստ Նոր տոմարի:

Թ. 11ա.— Տարեգիրն աւելացնելով գտնել տարուայ բարեկենդաններն և նշանաւոր տօները:

Թ. 14բ.— (Նամակի պատճեն՝ ուղղված Գեորգ Եպս. Զորեքչյանին, 10 նոյեմբերի 1924 թ., Տբիլիսի):

Թ. 15ա.— Մշտնջենաւոր տարե-տօնացոյց ըստ Գրիգորեան Նոր տոմարի՝ (իսկապէս իմ Զ. ա.ք. Զարդ.) Զկնի Ծննդեան Յսի Քսի ի 1920 թ-ից յեւտադարձ՝ ցծնունդն Քրիստոսի:

Թ. 28ա.— (Այստեղ երեք տող վրացերեն է գըր-

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1986 թվականի № № ԺԱ—ԺԲ-ից:

ված, նաև 1924—2494 թթ. տախտակը վրացերենով է:)

Թ. 28բ.— Առաջին երեսին (այսինքն նախորդ— Ն. Մ.) դրուած վրացերէն աղիւսակի հետ հետևեալ գրատար խնդիրը ներկայացրի Տփխիսի հայոց թեմական առաջնորդ Գերապ. Տէր Գէորգ Սրբազան Եպիսկոպոս Չորեքչեանին: (Այստեղ տրված է նամակի պատճենը:)

Թ. 29ա.— Ի ժողով՝ Նոր տօմարն (Գրիգորեան-Զաքարեան) ընդունելու մասին: Սոյն արձանագրութիւնը ներկայացրել եմ 1923 թ. հոկտ. 11-ին № 8 յայտարարութեամբս Վրաստանի և Իմէրէթի թեմի հայոց Վիճ. Առաջ. Գեր. Տէր Գէորգ Բարձր. Սրբ. Եպիս. Չորեքչեանին: (Այստեղ տրված է նամակի պատճենը:)

Թ. 30բ.— Քրիստոնէից պասեքն-Զատիկն:

Թ. 31ա.— (Նույնը):

Թ. 32ա.— Ժամանակահաշիւ:

Թ. 33բ.— Սուրբ Յարութեան-Զատկի օրուայ որոշումն գտնելը:

Թ. 35ա.— Ժամանակի չափումն:

Թ. 37ա.— (1924 թ. նամակի պատճեն ուղղված Գեորգ Եպս. Չորեքչյանին):

Թ. 37բ.— 19-ամեայ վերադրաց շրջան ըստ Նոր Տօմարի:

Թ. 38ա.— Եօթն տարեգրով 28-ամեայ շրջան Մշտնջենական Տօնացուցի, եթէ Քրիստոնէական եկեղեցին ընդունէ համեստ առաջարկութիւնս այս: Զաքարիա ա. քահ. Զարդեղեանց:

Տարուայ նշանաւոր և շարժական տօներն և նոցա միջոցները:

Թ. 38բ.— Հրէից տարիներն, օրուայ բաժանումներն և գիշերուայ պահերը:

Թ. 41բ.— Հռովմայեցւոց օրացոյց:

Թ. 42բ.—Եօթն տառով 28-ամեայ եօթներեկաց կամ կիրակագրոց շրջան մշտնջենաւորական տօնացուցի:

Թ. 43ա.— Յունական և Գրիգորեան (հին և նոր) տօմարների մասին (պատճէն):

Թ. 43բ.—Մայսի առաջիկայ հանդիպակացութիւնը:

Թ. 44բ.— Աղիւսակ II.—Հանդիպակացութիւն Մարսի 1924 թ.:

Թ. 46բ.— Երկնային մարմինների մէջ:

Թ. 48բ.— Նոր Տօմարով Գիր-Տարւոյն կամ Տարեգիր գտնելու կանոն, սկսեալ ի 1925 թ. է Քրիստոսի (պատճէն):

Թ. 50ա.— (10 նոյ. 1924 թ. նամակի պատճեն ուղղված Գեորգ Եպս. Չորեքչյանին:)

Թ. 50բ.— (Գեորգ Եպս. Չորեքչյանի 5 նոյ. 1924 թ. նամակի պատճենն ուղղված Զաքարիա ա. քահ. Զարդեղյանցին:)

Թ. 51ա.— (Գեորգ Ե. Ամենայն հայոց կաթողիկոսի 1 նոյեմբերի 1924 թ. օրհնության կոնդակի պատճենը տրված ձեռագրի հեղինակ քահանային:)

Թ. 51բ.— (Այստեղ կան երեք նամակների պատճենները.

ա. Վրացի Բենիամին ավագ քահանա Կանդելակիի.

բ. Զաքարիա ավագ քահանա Զարդեղյանցի և

գ. Վրաստանի առաջնորդ Գեորգ Եպս. Չորեքչյանի, ի մասին այրի քահանաների երկրորդ ամուսնության հարցի վերաբերյալ:)

Թ. 52ա.—(Այստեղ կա ռուսերեն նամակի պատճենը գրված Զաքարիա ա. քհն.ի կողմից:)

Թ. 52բ.— Հայաստանեայց Ս. Եկեղեցում տօնուող սրբոց անուններն՝ ըստ այբուբենական կարգի:

Թ. 53ա.— Կցորդք կամ յաւելեալք Մշտնջենաւոր ձայնագիտի ըստ նախնեացն:

Թ. 53բ.— Հայերէն և վրացերէն վերադիրներ, եօթներեակներ և Գիր տարիներ—Զատկական կիւրակէներ 2512 տարուայ:

Թ. 55ա.— Մշտնջենաւոր օրացոյց. Հին և Նոր տօմարով:

Թ. 55բ.— Հայրապետական սրբատառ կոնդակների պատճէններ (նույնը՝ թթ. 56ա, 58ա և 58բ):

Թթ. 57ա—57բ.— (Վկայագրի և երկու վկայականների պատճենները:)

Թ. 57բ.—(Վրաստանի առաջնորդ Գեորգ արքեպս. Սուրենյանցի 3 Փետրվարի 1895 թ. նամակի պատճենը):

Թ. 59ա.— Շարժողութեան արագութեան ամենամեծ չափը (рекорд):

Թ. 59բ.—Կանոն միջոց ուտիքները գտնելու համար:

Թ. 60ա.— Օրագիտ անել հիմնական, կցորդ և ամսաթուերով:

Թ. 60բ.— Ամսաթուերի օրերը գտնելու համար՝ տուած ամիսների կցորդների 28-ամեայ շրջան:

Թ. 61ա.— Միջոց ուտիքների, Բարեկենդանների և Տէրունական տօների սահմանները:

Թ. 62ա.— Ծայրագոյն Պատրիարքի և Վեհափառ Կաթուղիկոսի ամ Հայոց Տոն Տոն Գէորգայ Ե-ի կողմից հեռագիր Տփխիս՝ յեղափոխութեան Հոկտեմբերի տօնի 10-ամեակին առթիւ:

Թ. 62բ.— Օրագիտ անելու համար ամիսների հիմնական-անփոփոխ-մնայուն կցորդները:

Օրագիտ անելու համար թուականների 28-ամեայ շրջանների 7 թուից բաղկացած փոփոխական-անկայուն կցորդների յաջորդական կցորդները: Վերջին 28-ամեայ կցորդների շրջանը վերջացել է 1912 թուին, որից և պիտի շարունակուի հետևեալ յաջորդականութեամբ, որ 28-ամեայ շրջանի սկիզբն է:

Թ. 63ա.— Նոր Տօմարի մուծումն:

Թ. 63բ.— Տօմարական գիտելիքներ:

Թ. 64ա.— Երկինքն 1927 թուին:

Թ. 64բ.— Խորհրդային իշխանութեան կարգադրութիւն. անընդհատմանն անցման նախօրեակին:

Թ. 65բ.— Նոր հսկայ-մոլորակ (աստղ):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Պահպանակի վրա գրված է)

Մայր մատեան
Նոր տոմարական գիտելեաց.
Աշխատասիրութիւն
Զաքարիա աւագ քահանայի
Զարդեղեանց՝
Միաբան Աւետեաց-Ձգրաշէն

Ս. Աստուածածին Եկեղեցոյ Հայոց
Տփխիսայ.
Սկսեալ ի 12/25 օգոստոսի 1922 ամի.
ի ք. Տփխիս:

Թ. 1ա.— Աստուած, տուր ինձ խելք ու շնորհ. աւարտել այս Տօմար Նոր: Զաք. աւագերէց Զարդեղեանց:

Թ. 1բ.— Նոր-Տօմարով նոր-տարիք՝ թող տան մարդոց նոր բարիք (նույն ստորագրությունը միշտ կրկնվում է):

Թ. 2ա.— Նոր տօմարով միշտ անշեղ՝ տօնէք տօներ վեհ, շնքեղ (ստրգր.):

Թ. 2բ.— Նոր տօմարով Ծնունդ-Զատիկ՝ տօնիր լուարթ բիւրանպատիկ (ստր.)

Թ. 3ա.— Նոր Տօմարով ամեն տօն՝ կատարելու եղիր կգօն (ստորագր.):

Թ. 4ա.— Ով Նոր Տօմարս այս հերքէ, նոյն թէ՝ մատով ջուր հերկէ (ստրգրության.):

Թ. 4բ.— Նոր Տօմարս այս իմահնար՝ սիրտ-հոգ-ույս է անոյշ քնար (ստր.):

Թ. 5ա.— Մտաւոր մեր աչաց լոյս. որ է ի մեզ ընդաբոյս, ծնանէ կՀաւատ, կՍէր և կՅոյս. մեր սիրտ-հոգւոց ոյժ, խրախոյս (ստրգրության.):

Թ. 5բ.— Մեր կգացմանց ապնիւ բերք. որ է անոյշ, քաղցրիկ երգ, յար կը բուժէ, ով ընկերք. մեր սիրտ-հոգւոց խորունկ վէրք (ստրգրության.):

Թ. 6ա.— Արևի պէս մաքրիր ամեն տեսակ ապականութիւն, բայց ինքդ մի ապականուիր (ստրգրության.):

Թ. 6բ.— Պաշտօնիդ մէջ հաւատարիմ, նաև արի. իսկ մարդոց հետ՝ եղիր խաղաղ, անկեղծ, բարի (ստրգրության.):

Թ. 7ա.— Իբրև ստուեր է աշխարհիս կեանք, միանգամայն և սուտ իւր փառք (ստրգրության.):

Թ. 7բ.— Թէ ծովի կոհակք և թէ մարդոց կեանք. յար կը փոփոխին, ո՞հ բիւր-բիւր տեսակի (ստրգրության.):

Թ. 8ա.— Յո երթայ (կամ բնակի) մեղու. կքաղցը կհիւթ հեղու, Եւ քեզ ի մարդկան. այն է միշտ պատկան (ստրգրության.):

Թ. 8բ.— Արևն երկնից բոցավառ՝ կեանք է շնորհում բնութեան. իսկ կայծակ, շարժ ու հրաբուխ՝ մահ տալիս հէգ մարդկութեան (ստրգրության.):

Անսահման անհուն. ունինք մեծ հօր տուն, կընդունէ մեզ հայրն՝ քաղցր երբ մըտնենք քուն (ստրգրության.):

Թ. 11ա.— Ամեն նոր գարուն, նոր կեանք է տարուն (ստրգրության.):

Ամեն կեանք՝ անձին թանկ (ստրգրության.):

Երկնից անմահ Տէր. չի խնայի մեզ սէր. Երբ իրան էլ մենք՝ ջերմ սիրով սիրենք (ստրգրության.):

Թ. 12բ.— Ամպ և մէգ, նոյն և մեք: 10 նոյեմբ. 1897 թ. Յօբ (ստրգրության.):

Թ. 13ա.— Արև և ջեռ, նոյն է և սէր: 10 նոյեմբ. 1898 թ. Յօբ (ստրգրության.):

Թ. 13բ.— Սէր Յիսուս, լեր յիս յոյս: 6ն Յունվ. 1898 թ. Յօբ (ստրգրության.):

Թ. 14ա.— Վաղեմի ծանօթ՝ է փորձուած անօթ: 11-ն Յունվ. 1898 թ. Յօբ (ստրգրության.):

Թ. 14բ.— Հեպաբարոյ մարդ՝ է մայիսեան վարդ: 14-ն փետր. 1898 թ. Յօբ (ստրգրության.):

Թ. 15ա.— Չը յարգողը հօրն ու մօր՝ կը թափառէ միշտ մոլոր (ստրգր.):

Թ. 15բ.— Անպատկառ և չար որդին՝ նման է յիմար հորթին (ստրգր.):

Թ. 16ա.— Մարդն ապերախտ և դաժան՝ կը ծախէ հօրն էլ արժան (ստրգր.):

Թ. 16բ.— Երանի փոքր եղբօրը՝ միշտ կ'օրհնեն միմեանց օրը (ստրգր.):

Թ. 17ա.— Երանի հօրն ու որդուն՝ երբ գործին են ժիր, արթուն (ստրգ.):

Թ. 17բ.— Երանի դրստերն ու մօր՝ շէնացնում տունն ամեն օր (ստրգր.):

Թ. 18ա.— Երանի խոհեմ հարսին՝ սկեսրին կը պահէ վարսին (ստրգր.):

Թ. 18բ.— Երանի ժիր գիտղացուն՝ լաւ կը պահէ սերմնացուն (ստրգրության.):

Թ. 19ա.— Քրտնաթոր ժիր գիտղացին՝ հրաւիրում աշխարհ հացին (ստրգ.):

Թ. 19բ.— Գիտղացին և իր հողը՝ բընաւորինն են դողը (ստրգրության.):

Թ. 20ա.— Գիտղացին, իր մանգաղը՝ միշտ հարում չարի խաղը (ստրգր.):

Թ. 20բ.— Գիտղացին ու բանուորը՝ չարերին թափում հորը (ստրգրության.):

Թ. 21ա.— Բանուոր-գիտղացին բպվում՝ անյաղթ պետութիւն կպվում (ստրգրության.):

Թ. 21բ.— Վայ նորան, ով բանուորին թոյլ մատով տայ սիրտ-փորին (ստրգրության.):

Թ. 22ա.— Բանուորն և իր ծանոր մուրճ՝ փոշրում արքայից անուրջ (ստրգրության.):

Թ. 22բ.— Ժրաջան բանուորն և իր մուրճ՝ գործ կատարում հաջուով (ստրգրության.):

Թ. 23ա.— Բանուորի բազուկն և մուրճ՝ կերտում գիտութեանց կամուրջ (ստրգրության.):

Թ. 23բ.— Զօրքն և բանուոր-գիտղացին՝ ստրուկներ ի շղթայք բացին (ստրգրության.):

Թ. 24ա.— Զօրքն և բանուոր-գիտղացին՝ բընաւորին վիհ բացին (ստրգր.):

Թ. 24բ.—Մարդ չընկայ բնաւ անկընրօն՝ անհաւատն էլ ունի կրօն (ստրգր.):

Թ. 25ա.— Մի լինիր հաւասարով թեր՝ տիեզերքն ունի մեծ սէր (ստրգր.):

Թ. 25բ.— Սկզբունք բընաւորին՝
Եթէ դու իմն ես. նոր տուն կը հիմնես,
Իսկ եթէ դու իմ չես. հոգիդ պիտ փընչես (ստրգր.):

Թ. 26ա.— Թէ փառքի հասնի անկիրթ տղգէտը.
Նրանից պիտ փախչի կիրթ-խոհեմ-գէտը:
8-ն Մարտի 1895 թ. Բիւլանդ Կողբացի (ստրգրության.):

Թ. 26բ.— Թէ ունես տէր, հովանի
Միշտ արդար ես, գովանի:

(Շարունակելի)